



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ 19(310) 28.11.2016թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
223	«2017 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԼՂՀ Նախագահի ՆՀ-255-Ն հրամանագիրը...	3
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
224	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 674-Ն որոշումը.....	4
225	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 675-Ն որոշումը.....	5
226	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 676-Ն որոշումը.....	6
227	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 677-Ն որոշումը.....	7
228	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 678-Ն որոշումը.....	8
229	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 679-Ն որոշումը.....	9
230	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 680-Ն որոշումը.....	10
231	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 681-Ն որոշումը.....	11
232	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 575 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 891-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 685-Ն որոշումը.....	12
233	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 6-ի N 609-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 686-Ն որոշումը.....	13
234	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի վարչական սահմաններում գտնվող տարածքի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության N 690-Ն որոշումը.....	14

235	«Գյուղատնտեսության ոլորտի ջերմոցային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների կողմից սպառվող բնական գազի սակագնի մեղմման միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության N 735-Ն որոշումը.....	16
236	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 900-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 736-Ն որոշումը.....	17
237	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 900-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 740-Ն որոշումը.....	19
238	«2017 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 743-Ն որոշումը.....	21
239	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 900-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ֆինանսական միջոցներ հատկացնելու և կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» ԼՂՀ կառավարության N 744-Ն որոշումը.....	23

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԵՎ ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. 2017 թվականի հունվար ամսում անցկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. 2017 թվականի հունվար-փետրվար ամիսներին զորացրել օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ սույն հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկշաբաթյա ժամկետում ընդունել հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Բ.ՄԱՀԱԿՅԱՆ

2016թ. նոյեմբերի 16

Ստեփանակերտ

ՆՀ-255-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 674-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 3,09341 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 675-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Աղանուսի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 5,64672 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 676-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Գողթանիկի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,7369 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 677-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Սոնասարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 8,3357 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 678-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Հոչանցի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 10,5766 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 679-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 15,43605 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 680-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մշենու գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2226 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2016թ.

N 681-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Գանձայի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 16,3211 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 նոյեմբերի 2016թ.

N 685-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 575 ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 891-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 575 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 207-րդ տողի «Կումայրիի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Փակահանի միջնակարգ դպրոց» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու և օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 891-Ն որոշմամբ հաստատված N3 հավելվածի 7-րդ ցանկի 41-րդ տողի «Կումայրիի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Փակահանի միջնակարգ դպրոց» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 նոյեմբերի 2016թ.

N 686-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 609-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016-2017 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան, արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցի հաստատման մասին» N 609-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 6.1-ին կետերով.

«2.1. Մարտակերտի շրջանի «Ներքին Հոռաթաղի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գործող նախադպրոցական խմբի վեցօրյա և օրական վեցժամյա տևողությունը սահմանել շաբաթական հնգօրյա և օրական ութժամյա տևողությամբ:»

«6.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել Մարտակերտի շրջանի «Ներքին Հոռաթաղի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը.

2) Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի միջնակարգ դպրոցին կից նախադպրոցական խմբի գործունեությունն ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների նախապատրաստական խմբերի օրինակելի հաստիքացուցակը հաստատելու մասին» N188/Մ հրամանին համապատասխան և այդ խմբում ընդգրկել կրտսեր, միջին և ավագ տարիքային խմբերի երեխաներին:».

2) որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ բաժնի 3-րդ սյունակի 4-րդ և ընդամենը տողերի «19» և «104» թվերը փոխարինել համապատասխանաբար «20» և «105» թվերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմին՝ «Ներքին Հոռաթաղի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական խմբի նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակաընթացքի պահպանման ծախսերը՝ 1 739 900 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարը՝ ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մարտակերտի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնտեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ
ՇՐՋԱՆԻ ԲԵՐՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ
ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 12-րդ հոդվածներով և ելնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում քաղաքաշինական ենթակառուցվածքների ընդլայնման ծրագրերի իրականացման անհրաժեշտությունից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում քաղաքաշինական ծրագրի իրականացման անհրաժեշտությունը՝ Միշա Սենոյի Ժամկոչյանի սեփականությունը հանդիսացող 30.0 քառակուսի մետր կիսակառույց շինության և 3.0 հեկտար հողամասի (այսուհետ՝ Գույք, հասցե՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջան, քաղաք Բերձոր, 7 թաղամաս շինություն N 122, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 0003735 վկայական, տրված՝ 27.09.2002 թվականին) նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորմամբ.

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, քանի որ ծրագիրը նպատակաուղղված է քաղաքաշինական ենթակառուցվածքների զարգացման նշանակություն ունեցող ծրագրերի իրականացմանը.

2) սույն որոշմամբ սահմանված ծրագրի արդյունավետ իրականացումը չի կարող ապահովվել առանց նշված սեփականության օբյեկտի օտարման, քանի որ այն գտնվում է ծրագրով ընդգրկված գոտու տարածքում, ինչից էլ առաջանում է տվյալ տարածքի ձեռք բերման նպատակահարմարությունը.

3) սույն որոշմամբ նշված տարածքի նկատմամբ ճանաչված բացառիկ՝ գերակա հանրային շահը չի հիմնավորված վնաս չի պատճառում նշված տարածքի սեփականատերին:

2. Սահմանել, որ՝

1) բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքի ձեռք բերող է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը.

2) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ է սահմանվում սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամիսը.

3) օտարման գործառնությունների իրականացման աշխատանքները համակարգող և օտարման գործառնությունների իրականացման համար պատասխանատու պետական լիազոր մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմն է:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ ապահովել սույն որոշմամբ սահմանված բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքի նկատմամբ սույն

որոշումից բխող գույքային իրավունքների պետական գրանցումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում՝ սույն որոշմամբ սահմանված ձեռք բերողի սեփական միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2016թ.

N 735-Ն

ք.Ստեփանակերտ

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՄՊԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱԿԱԳՆԻ ՄԵՂՄՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և նպատակ ունենալով խթանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների զարգացումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովին բնական գազի սակագին սահմանելիս տարբերակել գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների սպառողական խումբը՝ վերջիններիս կողմից սպառվող բնական գազի համար սահմանելով խթանիչ սակագին:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2016թ.

N 736-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 900-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
03			ՀԱՄԱՐԱԿԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎ-ՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	1		Հասարակական կարգ և անվտանգություն	-	-	-	-
		1	Ոստիկանություն	-	-	-	-
		01	Հասարակական կարգի պահպանության ապահովում	-	-	-	(6 750,0)
			<u>ԼՂՀ կառավարությանն առընթեր</u>				
			<u>ԼՂՀ ոստիկանություն</u>	-	-	-	(6 750,0)
		03	Պետավտոհամարանիշերի ձեռքբերում	-	-	-	6 750,0
			<u>ԼՂՀ կառավարությանն առընթեր</u>				
			<u>ԼՂՀ ոստիկանություն</u>	-	-	-	6 750,0
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	9		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	-	-	-	-
		2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	-
		06	Կենսաթոշակների, պատվովճարների, աշխատանքային խեղման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման, ամենամսյա դրամական օգնությունների և պարզևատրումների վճարման հետ կապված ծառայություններ	-	-	-	(6 759,6)
			<u>ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>				
			<u>ԼՂՀ պաշտպանության նախարարության համակարգի կենսաթոշակների և դրամական օգնությունների փոստային առաքման ծախսեր</u>	-	-	-	6 759,6
		07	ԼՂՀ պաշտպանության նախարարություն	-	-	-	6 759,6

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2016թ.

N 740-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**.

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 900-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 740-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
 N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	-
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	4		Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	-	-	-	-
		1	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	-	-	-	-
		01	Գիտություն	-	-	-	(2750.0)
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	(2750.0)
		02	Պետական աջակցություն «Արցախի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	-	2750.0
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	2750.0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿՎԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2016թ.

N 743-Ն

ք.Ստեփանակերտ

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի «գ» կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել 2017 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը ըստ ծառատեսակների՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ պահանջարկի դեպքում թույլատրել սույն որոշմամբ հաստատված ծավալները 2018 թվականի հաշվարկային հատատեղի հաշվին գործափայտի մասով ավելացնել մինչև 15 տոկոսի չափով, վառելափայտի մասով՝ 20 տոկոսի չափով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 743-Ն որոշման

2017 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը

(ամբողջ ծավալը ցույց է տրված խտացված խորանարդ մետրերով)

Հ/Հ	Հատման տեսակը	Ընդհանուր ծավալը	Այդ թվում՝ գործափայտ							Այդ թվում՝ վառելափայտ
			Ընդհանուր ծավալը	Ըստ ծառատեսակների						
				Կաղնի	Հաճարենի	Հացենի	Լորենի	Բոխի	Թխկի, Թեղի	
1	Անտառվերականգնման հատում	39 850	9850	2000	4100	200	500	3000	50	30000
2	Խնամքի հատում	70 650	650	150	100			400		70000
3	Սանիտարական հատում	50 650	650	150	300	50	100	50		50000
	Ընդամենը	161150	11 150	2 300	4 500	250	600	3 450	50	150 000

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 նոյեմբերի 2016թ.

N 744-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ,
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ և 24-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 34-րդ և 35-րդ ու «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 900-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ ընկերություններ) կանոնադրական կապիտալն ավելացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման մարմիններին հատկացնել 1554500000 (մեկ միլիարդ հինգ հարյուր հիսունչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշման N 2 հավելվածում նշված պետական կառավարման մարմիններին՝

1) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով՝ սահմանված կարգով ապահովել ընկերությունների կանոնադրական կապիտալի ավելացումը.

2) սույն որոշման 2-րդ կետով հատկացված գումարներն ուղղել ընկերությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության արտաբյուջետային հաշվից ստացված փոխառությունների գումարների և տոկոսավճարների մարմանը.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել.

ա. ընկերությունների կանոնադրական կապիտալի փոփոխության սահմանված կարգով պետական գրանցումը,

բ. սույն որոշմամբ պայմանավորված հաշվապահական ձևակերպումների կատարումը:

4. Մահմանել, որ սույն որոշման 3րդ կետում նշված փոփոխությունների պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման ընկերությունների միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 900-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ.դրամ)

բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	(1 554 500.0)
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	-	(1 554 500.0)
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	-	(1 554 500.0)
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	-	-	(1 554 500.0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	(1 554 500.0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	-	1 554 500.0
	1		ԼՂՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	-	1 554 500.0
		1	ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	1 554 500.0
		01	ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	1 554 500.0
			ԼՂՀ կառավարություն	-	-	-	1 554 500.0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ցանկ

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններին կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով տրամադրվող գումարների

(հազար դրամ)

Պետական կառավարման մարմինների և 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների անվանումները	Գումարը
ԼՂՀ կառավարության աշխատակազմ	179 050.0
«Կառավարում» ՓԲԸ	179 050.0
ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	331 210.0
«Հիդրոսերվիս» ՓԲԸ	19 570.0
«Ջրային տնտեսություն» ՓԲԸ	41 030.0
«Տոհմային կայան» ՓԲԸ	270 610.0
ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	520 800.0
«Արցախտոլի» ՓԲԸ	361 070.0
«Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	159 730.0
ԼՂՀ էկոնոմիկայի նախարարություն	49 220.0
«Արցախկապ» ՓԲԸ	49 220.0
Շուշիի շրջանի վարչակազմ	84 920.0
«Վահե Կարապետյան ճանաչագործում» ՓԲԸ	84 920.0
Քաշաթաղի շրջանի վարչակազմ	389 300.0
«Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ	389 300.0
Ընդամենը	1 554 500.0

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ